ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 388 - Ա 23 օգոստոսի 2016 թ.

«ՄԵԾ ՄԱՍՐԻԿԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 197-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգի» 6-րդ և 7-րդ կետերը՝

որոշում եմ՝

1. Հաստատել 2016 թվականի օգոստոսի 24-ին, ժամը 14^{00}-ին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Մեծ Մասրիկի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի կազմը՝ Նիկոյան Արտաշես (մարզպետի տեղակալ), Պողոսյան Անուշ (մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ), Ղուկասյան Վերգինե (մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ), Սարգսյան Նելսոն (մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ), Խաչատրյան Հայկ (մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար), Խաչատրյան Վիգեն (մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի վարիչ), Մնացականյան Վարդանուշ (մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ):

2. Մրցութային հանձնաժողովի նախագահ նշանակել Արտաշես Նիկոյանին, քարտուղար՝ Նելսոն Սարգսյանին:

3. Հանձնաժողովի լիազորությունները համարվում են դադարեցված մրցույթի ավարտին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ